



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Կ Յ Ա Ն Ք Ի Տ Ո Ն Ը

Չատիկ է, հավիտենական գարնան և հավերժական կյանքի տունը, բնության վերագարթոնքի և մարդու հոգևոր, քարոյական վերածննդյան տարեդարձը:

Քրիստոնեական Եկեղեցին, ամեն տարի, գարնան, սրտառույզ հավատով, կատարում է իր մեծագույն և համաժողովրդական տունը՝ Քրիստոսի հրաշափառ հարության հիշատակը:

Գարուն է արդեն: Ամեն կողմ բնության գարթոնքի ջերմ շունչն է զգացվում, որ մենաժողովրդական հաղորդում է կյանք ու կենդանություն:

«Որ նորոգեաց գտիեզերս» (Ծարական): Գարնան, կյանքի ուժերի հաղթական պոռթկման հետ, հավատալիոր մարդկությունը բերկրանքով է դիմավորում Չատիկը, Փրկչի հրաշափառ, Սուրբ Հարության տունը:

«Այսօր յարեալ ի մեռելոց

Փեսայն անմահ և երկնաւոր:

Քեզ աւետիք խնդրեան,

Հարսն ի յերկրէ Եկեղեցի»:

(Ծարական)

Չատիկը, սակայն, բնության տուն չէ միայն Եկեղեցու համար, այլ նաև կյանքի, սիրո և հավատի տուն:

Եկեղեցին գեղեցկորեն ներդաշնակել է բնական և հոգեկան կյանքի ուժերի վերագարթոնքի, հարության գաղափարները: Երբ բնությունը լցվում է նորոգված կյանքի զվարթ խայտանքով, մարդն էլ բերկրում է հոգեկան նորոգության սուրբ հրճվանքով:

Փրկչի հարության պատմական եղելությունը, ըստ Ավետարանի, հանդիսացավ հուսալի սկիզբը մարդու հոգևոր և քարոյական վերածննդյան, հավիտենական կյանքի ուրախության: Քրիստոսի հարության ավետիքով և հավատով վերակենդանացավ հին աշխարհը և կյանքը նոր արժեք ստացավ մարդու համար:

Աշխարհին և մարդկության քարոզված քրիստոնեության մեծագույն բարիքներից մեկը հարության հավատն է, որը մի նոր կյանքի և կենդանի գաղափարախոսության սկիզբը հանդիսացավ մարդկային կյանքի և մտածողության պատմության մեջ:

Չատիկը կյանքի ուժերի հաղթանակն է աշխարհի մահացուցիչ խավար ուժերի վրա, սիրո հաղթությունը՝ ատելության, չարիքի վրա: Եկեղեցին հավատում է Քրիստոսի հարության, ուրեմն և կյանքի հաղթանակին: Կյանքի սերը պարտության է մատնում մահվան ուժը, չարիքի զորությունը:

Դարեր շարունակ մահը, որպես անպարտելի բռնավոր, անխնա հարվածել է մարդկությանը, ծանր մղձավանջի մեծ ճնշել կյանքի ուժերի վրա, տիրել մարդկային մտքին ու զգացումներին: Մարդը միշտ թույլ և անզոր է զգացել իրեն մահվան առաջ:

Քրիստոսն էլ գերծ չմնաց մահվան պատճառած դառնությունից:

Բայց և Քրիստոս միայն հաղթեց մահվան իր կյանքով և սիրով, տիրեց կյանքին և ցույց տվեց, որ գերեզմանից այն կողմ էլ կյանք կա, անմահություն կա և Ինքն է տերը կյանքի և մահվան:

Արդարև, քրիստոնյա մտածողության համար, գերեզմանով չի վերջանում կյանքը: Եթե այդպես լիներ, չէր արժի ապրել «այս վշտի և ցալի հովտում»: Մի՞թե գերեզմանով են վերջանում մարդու ստեղծագործող միտքը, նրա բոցավառ սերը, հույսը, երազներն ու ձգտումները:

Գերեզմանը քրիստոնյա մարդու համար ունայնության փոս չէ, այլ նոր կյանքի, հավերժական կյանքի նախադուռ, մի լուսամուտ, մի անցք՝ բացված անմահության, հավերժության վրա:

Որքա՞ն մխիթարական, սփոփարար է հարության գաղափարը տառապող մարդկության համար:

Մի՛ լալք, զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս:

Կյանքում կա՞ սրանից ավելի սրտապնդիչ, սփոփարար մխիթարություն բոլոր նրանց համար, որոնք վաղաժամ հողին են հանձնել իրենց սիրելիներին, իրենց երազներն ու հոգու թոփալները:

Արդարև, ըստ մեր հավատի ու փորձառության, «մեռեալք յառնեն»: Քրիստոսի հարությունը հեքիաթ կամ այլաբանություն չէ, այլ ապրված կյանք և իրականություն: Պատուված է մահվան վարագույրը և իրար են շաղկապված ընդմիջող կյանքն ու հավերժությունը, ժամանակավորն ու հավիտենականը: Երկրալիք այս կյանքը գրավականն է անմահության, հարության:

Քրիստոսի հրաշափառ հարության հավատը ոչ միայն լրումն է փրկագործության խորհրդի, այլ նաև հիմնաքարը քրիստոնեական Եկեղեցու կյանքի:

Հեթանոսաց մեծ առաքյալը Պողոս այսպես սուր, վճռական է դնում հարցը. «Եթե Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն մեր, և գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ» (Ա. Կորնթ. ԺԵ 14):

Քրիստոսի հարության ճշմարիտ վկայությունը Քրիստոնեական Եկեղեցու երկհազարամյա կյանքի և գործունեության փաստն է և այդ հավատից սնված քրիստոնեական քաղաքակրթությունը:

Քրիստոսի հարության ամենաջերմ հավատացողներից մեկն եղավ նաև մեր ժողո-

վուրդը: Նա ոչ միայն վկայեց Փրկչի հարությունը, այլ ապրեց մահավանդ հարության այդ վկայությունը իր նահատակությամբ. «Զչարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ» (Գաղատ. Զ 17):

«Հայ ժողովուրդը, — ասում է Վեհափառ Հայրապետն Իր զատկական քարոզում, — իր բազմադարյան սլաոմությամբ և իր թողած ժառանգությամբ, կենդանի վկայություն մը եղավ Քրիստոսի հարության ու Անոր հավիտենական կենդանության»:

Մեր ժողովուրդը խաչի և մահվան մահալարհներից անցավ, հասնելու համար իր հարության այգաբացին, որովհետև հալաւաց հարության ճշմարտության. «Յոյս նոցա լի է անմահութեամբ»:

Դարերի ընթացքում շատ է չարչարվել, նահատակվել հայ ժողովուրդը:

Հաճախ մեր հայրենի հողը դարձել է մեր ժողովրդի գերեզմանոցը, ինչպես 1915 թվականի ապրիլյան եղեռնի օրերին: Բայց մեր ժողովուրդը միշտ գիտեցել է խաչի և Գողգոթայի իր կյանքը պսակել հարության սրտառուչ հավատով և վերածննդամբ: Նա Փրկչի մահն հարություն է սուել վճռական կամքով և մահվան դաշտը վերածել հավիտենական կյանքի կանաչ դաշտերի. «Եմուտ ի նոսա շունչն, եղեն կենդանիք և կանգնեցան կացին ի վերայ ոտից իրեանց ժողովորդ բազում յոյժ յոյժ» (Եզեկ. ԼԷ 10):

Մեր ժողովրդի կյանքի գարունն է այսօր, հարության այգաբացը:

Քրիստոսի հարության հավատի ու հրաշքի մեջ աճած ու պայծառակերպված, երեկվա մեր նահատակ ժողովուրդն այսօր, իր հայրենի հողի վրա, վառել է իր հավերժական կյանքի խարույկը, տեղ է դարձել իր հողին ու ճակատագրին, և նոր կյանքի ապահով ու խաղաղ պայմաններում, Վեհափառ Հայրապետի քարոզի ճշմարիտ բնորոշմամբ, դարձել է իր Եկեղեցիով, իր մշակույթով, «ոգեկան առաքելություն մը կրող ու կենսագործող առաջադեմ ազգություններեն մին»:

«Փառք հրաշափառ յարութեան քո, Տէր»:

Եվս առավել փառք հրաշափառ հարության քո, Եկեղեցի՛ Հայաստանյայց և ազգ իմ սիրելի, ժողովուրդ հայոց:

